

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
սարեկան	6 "
վեցամեայ	6 "
Արսասահմանի համար	15 "
սարեկան	8 "
վեցամեայ	8 "
Անկերիկայի համար	3 ֆր.
սարեկան	1.50 "
վեցամեայ	1.50 "

Ծանուցման տղը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երկուսն առաջին անգամներու համար 20 0/0 զեղչ կրչայ :

Վառնայի համար  
ձեռքի 40 սանթիմ

# ՉԱՐՔՈՒՄ

## ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆԻ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՎՇՈՒԹԻ ԵՒ ՇԱՐՔՈՒՄ ԳՐՈՒԹԻՒՆ

ՇԱՐՔՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԸՏԻ Է ԿԱՆԿԻՎ ՎՃԱՐԷ

Նախկին և նորագույն լրագրողական հասցեի

Редакция на вѣстникѣ  
„Паржумъ“  
Варна

Redaction du journal  
„Char,oum“  
(Bulgarie) Yarna

Պուշկարիոյ համար  
ձեռքի 15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար  
ձեռքի 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չնճ  
տպար

### ՈՐՈՇԵՆՔ ՇԱՐՔԵՐԸ

Առանց գործի խօսքը սկսած է.

(Շար. Ասխուրդ քիւն և վերջ)

Քաղաքական յանցանորի մը համար պատիժը կը տրուի ոչ թէ անոր ու է վաղանցուկ մարմնական ցաւ պատճառելու նպատակով, այլ բարոյապէս և նիւթապէս զրկելու համար զրնքը քաղաքակրթութեան առաւելութիւններէն, որոնց անհրաժեշտօրէն պէտք ունի իբր զարգացած մարդ պարելու համար. հետեւաբար երբ մէկը կողկասէն Օղէտա, Մոսկուա, կամ Պոլսէն իզմիր կաքսորուի կրնայ քաղաքակրթութեան առաւելութիւնները աւելի դիւրաւ վայելել, քան կողկասի և Պոլսոյ մէջ. ու այդ պիտի իրաւունք չունի հաւածականի. բանտարկեալի, աքսորականի պէ՛տք քարշ տու իր ետեւէն ամեն տեղ, երբ անդին երկար, երբեմն տասնեակ տարիներով Սախալինի և Սիպերիոյ սառնամանիքներու ու և՛ ֆրիկէի կամ Արաբիոյ բանտերու մէջ իսկապէս կը տանջուին կամ տանջուած են, ամենասովորական վայելքի մը կարօտը քաշելով միշտ, ճշմարիտ տառապանքի, իրական զրկանքի ցաւերը կրելով իրենց վրայ :

Արդէն քաղաքական յանցանորի մը տրուած պատիժին մեծութիւնը անոր յանցանքին մեծութիւնը, այսինքն աւելի կարեւոր յեղափոխական գործունէութիւն ունեցած ըլլալը կը շեշտէ. Ապա թէ ոչ գործիչ մը Ստեփան, ուրիշ մը Սիպիլի չը պիտի աքսորուէր. եւ ճիշդ զանազան այս երանգն է որ մեր հասարակութեան հասկացողութեան աչքի առջև միջոց մը թ պահելու կաշխատին մեր շահագործողները :

— Մարդը բանտ ալ պառկած է, ալ ի՞նչ կուզէք :

— Բայց քանի՞ օր. ի՞նչ պէս :

— Աքսոր ալ գացած է. Ալ ի՞նչ կուզէք :

— Բայց ո՞ւր, Եւրոպա. եւ ալ կերթամ :  
Լաքէններուն փառաբանութիւնն է. բայց տակի հարցումները...  
Թեթեւ պատիժը թեթեւ յանցանքի նշան է, ծանր պատիժը ծանր յանցանքի. Կառավարութիւնները իրենց համար աւելի շատ փաստակար քաղաքական յանցանորները աւելի ծանր պատիժներով պարտաւոր են, քիչ փաստակարները քիչ պատիժ : Բայց անունները նոյն են. բանտ, աքսոր, զըրկանք, տառապանք :

Ասիկա մեր շէֆերուն բացարձակ յայտնի է. բայց և այնպէս արգելք մը չըլլար, բառերը չհարգածէին, ժողովրդին մութ հասկացողութիւնը շարաշար չհարգածէին, բանտան, ստորագրան ճշն իրենցմէ յեղափոխականապէս աւելի արժեքաւոր անցեալ սենցող ընկերները, նոյն իսկ զանոնք վարկաբեկել կամ չեղքեցնել աշխատին ուղղակի կամ լաքէներու միջոցաւ : Ահա շէֆ մը, պետ մը, որ բանտ կերթայ. ու ազատի կուզէ պաշտօնապէս օրինակ բերելով իր մէկ ընկերը, որ իր ծանր, ապացուցեալ յանցանքներուն, այսինքն աւելի կարեւոր յեղափոխական գործունէութեան փոխարէն հեռաւոր սառնամանիքներու մէջ աքսորանքի միայն կը դատապարտուի, մինչդեռ կախազանի արժանի էր, իսկ ինք բազմաթիւ շատ շնչին յանցանք կը ներկայցնէր՝ թողունք ազատութիւնը, որ կայ ազատութեան այս վիճակին մէջ. եթէ աւելցնենք որ այդ անձը վերջէն ամէն ջանք գործ դրած է իր իսկ խոտովանութեամբ ընդունած աւելի մեծ քաղաքական յանցանորին, այսինքն աւելի մեծ յեղափոխական ընկերին ձայնը խեղդելու, չեղքեցնելու իշխելու, զանազան էնթրիկներով կամ լաքէներու միջոցաւ վարկաբեկելու, այն ատեն կը հասկնանք թէ փտութիւնը յեղափոխական շարքերու

մէջ որ աստիճան աւերումներ գործած է :

Բայց յանցանքը ոչ մէկ արժեք չը ներկայացնող լաքէներունը չէ. թափ մը. ու ամենքն ալ լը խեղդուին :

Պէտք է որ առաջ անցնին խօսքըն ու գործը իրենց մէջ միացնող ճշմարիտ յեղափոխականները, որոնք անձնագործութեան փառքով մենաշնորհուած են մանաւանդ : Յեղափոխական բանակին ճշմարիտ առաջապահները զուք էք, ու զուք պարտաւոր էք սուտ շէֆերու տիրապետումը խորտակել. յեղափոխական գործը անոնց ոչ յեղափոխականի կամայականութիւններէն ազատել միանգամ ընդ միշտ :

Խօսողը պէտք է գործէ, «իրօք գործէ», կամ հեռանայ :

Տանգօն, Մառա, Ռոպէսըիւն, Ֆրանսական յեղափոխութիւնը քարոզեցին. բայց անոր համար մեծան. Պոթէվ, Լէվսի պուլկար, Տէլլիւ, Տաւրտով, Մակեդոնական յեղափոխութիւնը քարոզեցին մահէ չը փախան և մեռան. Պալմաչօֆ, Կալանով Ռուս ապստամբութիւնը քարոզեցին եւ իրենք, այդ համախարանականները, անձամբ տառնց խոպան միտք մը առաջ քշելու գացին ու մը նետեցին եւ իրենք կախուեցան :

Կարիպալտի, Մաձէիի Իտալիոյ ազատութիւնը և միութիւնը քարոզեցին և զինեալ բանակներու գլուխը անցան : Այն մարդը որ զեկովարել կուզէ հայ յեղափոխութիւնը պէտք է բանակներու գլուխը անցնի : Լօնտօն, Բարիզ, Փնէվ եւ այլ տեղեր չափեփով ոչ ոք այդ իրաւունքը ձեռք չի կրնար բերել :

Ու թող լուեն սուտ կամէութիւնները, ետապաշտ ոչնչութիւնները, զոհողութեան անընդունակ ու տիրուծի տիրահար փոքրօգիները : Անոնք յեղափոխութեան աղտերն են, որոնք մաքուր շարքերը կը պղծեն, կապականեն առանց ու է օգտակարութիւն բերելու : Յեղափոխու-

թեան աղիքներուն փաթթուած մակարոյժ որգերին, որոնք արտաքուստ պարզ մահկանացուներուն գործը փայլուն, սուղ և ւժպտուն ցոյց կուտան. բայց փորձառու բժիշկը իսկոյն կարմրութեան այդ փայլին տակ կորոչէ փախտի մակարոյժ որգը. անոր պայտուցած թունաւոր թաղախոր որ օր մը մէկէն մէկ պիտի տարածուի արիւնին մէջ ու պիտի թունաւորէ ամբողջ մարմինը :

Անկաշկանդ թերթերը պիտի կատարեն այդ վիրաբուժի դերը և անոնց գործին մօտիկ ծանօթ խմբագրութիւնները : Բայց ո՞ւր է այդ անվախ յանգստութիւնը : Մեր թերթերը կարծես խնամոտ լուծեամբ մը դաւակցած են իրարու. ինչպէս 96ին Էւրոպական թերթերը դաւակցած էին հայկական հարցին շուրջը լուծութիւն պահելու հեռաւորէն, որ երբեմն յանդուգն թախնիք սկըսու ունենալ, կապատէինք գոնէ վարագոյրին պատտելը. Բայց ան ալ հազիւ բերանը կը բանայ ու հարուսի բռնուածի պէս իսկոյն ձայնը կը քաշէ :

Բայց ամօթ է. ալ պէտք է ցոյց տանք մեզի որո՞ւ պէտք է հետեւիլ եւ ո՞վ է ճշմարիտ յեղափոխականը ախօր : (\*)

Տրաւաքանաքիւն

Գերմանիա

(\*) Պարոն յօգուածակիրը. ինչպէս երեւում է յիշարժումին կանոնաւոր հետեւողներին չէ եղել, որ այդպիսի մի ծաղրական յանդիմանութիւն է նետում մեր խմբագրութեան երեսին : Ոչ այնքան այդ անտեղի ծաղրը ետ մղելու, որչափ մեր զուտ յեղափոխական գործը պաշտպանողի խմբագրական պարտականութեան մէջ չը թեքացած լինելը ապացուցանելու համար մենք պարտաւորում ենք փաստեր բերել որ Շարժումի խմբագրութիւնը անհրաժեշտ համարված յանգստութիւնը, որը այնքան էլ անժան չէ նստել թերթի գլխաւոր վարիչին, սենցեղ է ժամ առաջ, վաղորօք մատնանշելով այն բոլոր թերթութիւնները որոնք գոյութիւն ունին մեր յեղափոխական շարքերու մ որոնց վրա միայն այսօր է անդրադարձել պարոն յօգուածակիրը :

Թող փաստերը խօսեն :  
1899 թ. ապրիլի 2 ի 113 թը-  
ւում սպված է «Արթուր յեղափոխա-  
կաններ» խորագրով նախօրոյածը ,  
Գասպարի ստորագրութեամբ :

1900 թ. ապրիլի 272-278 թերու-  
մ սպված է «Կարանած թռչնիկ» խո-  
րագրով բանասիրականը , իմ ստո-  
րագրութեամբ :


1901ին 345 թ.ում «Հայի վերջին  
խօսքը պէտք է լինի զէնքով» նախ-  
օրոյածը իմ ստորագրութեամբ : 1902ի  
403-404-405 թերու-մ «Նախօրոյած»  
խորագրով յօդուածները շարքերը իմ  
ստորագրութեամբ :

Նոյն թ. ապրիլի 407 թ.ում սպված  
«Զրիակներ թիւեր յեղափոխական  
մարմիններ մէջ» նախօրոյածը իմ  
ստորագրութեամբ : 1904ի կէսից ար-  
դէն սկսվում են մի շարք յօդուած-  
ներ իմ ստորագրութեամբ :

Այդ բոլոր յօդուածներում յաջոր-  
դաբար մատնանշված են բոլոր այն  
թիւերը թիւերը , շատ անգամ սե-  
լի խիստ , պարզ որոշ կերպով , քան  
«Որոշե՛ք շարքերով մէջ մատնանշ-  
վում է այսօր , Այնպէս որ Եւրոպայում  
ամեն տարի պարտք է զգացել մատ-  
նանշելու մեր յեղափոխական կազ-  
մակերպութիւնների թիւերը թիւերը  
և իր պարտքը կատարել է :

ՎԱՐԴՕ

ԵՐՈՊՊՍԵՒ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ Մ ՈՒԹԻՒՆԸ



(Շար. նախորդ թիւին և վերջ)

Բայց ի՞նչու անպատճառ լիազոր-  
ներ . որովհետեւ ուսանողները զկար  
գի ու սարգի կոխելու համար բա-  
ցարձակ իրաւունքներով բռնապետ-  
ներ հարկաւոր են , ու , համարիս  
եմ , այդ բռնապետները հարկաւոր  
են ուսանողութիւնները թափթփուք  
ները ժողովուրդ ու միասին ձուլելու  
համար , որովհետեւ գիտակից ուսա-  
նողութիւնը երբէք յանձն չը պիտի  
տանէր իր գլխուն սուլթաններ ու  
ձարեր ստեղծելու ու պիտի հրաժա-  
րէր հեղափոխութեան այդ տեսակ անու-  
նապէս միայն ուսանողական եղող  
կազմակերպութեան մը . ինչ որ այ-

սօր իրականութիւն մըն է՝ դէպի  
կոնգրէսը ուսանողական շատ մը քա-  
ղաքներու ցոյց տուած բացարձակ  
անտարբերութեամբը : Ինչ որ իրա-  
կանութիւն մըն է , դարձեալ այսօր ,  
այն ողբալի համագումարին տեղի ու-  
նենալովը Պէննի մէջ , որ կազմուեց էր  
ժընէվի ու Լոզանի ուսանողներու  
գրեթէ ամբողջութեան , որոնց մէջ  
ներկայից , միամիտները ու միշտ  
զբարի հայ օրիորդները բաւական  
խոշոր թիւ մը կը ներկայացնէին :  
Լիազորին համար մարդ ու ՄԱՏ հար-  
կաւոր էր , նորեկները ու ցոյց տը-  
րուած դասակարգը , այդ բանին հա-  
մար ամենէն նպաստաւոր տարրեր է-  
ին , զոր ըստ կամս կրնար շահագոր-  
ծել :

Բայց խնամութիւններով , հաճո-  
յակատարութեամբ ուսանողական  
ընդհ. միութիւն գոյութիւն չը կը-  
նար ունենալ երկար ժամանակ ու  
ան կը կործանի թողով ակօս մը իր  
ետեւէն՝ որուն պեղած ու բացած  
դժուարութիւնները պիտի համեմեն  
ուսանող անունը կրող բոլոր երիտա-  
սարդներ իրենց վտանգուած գրու-  
թեամբ :

Մեծ աղմուկ հանել , ո՛չ մէկ բան  
ընելու համար , ահաւասիկ լիազորին  
բոլոր գործունէութիւնը : Իսկի մը  
տետրակներ , [ողբալի ու ցաւաղար  
ընտրութեամբ մը] , Հայաստանի ա-  
նունը կրող քարտէս մը [բայց իրա-  
պէս արդի ափսոսանքներ ներ-  
կայացնող] ու գուցէ քանի մը նման-  
օրինակ վիժած հրատարակութիւն-  
ներ ևս , ահաւասիկ այն յեղափո-  
խական ու ազգանուէր գործունէու-  
թիւն , զոր արտացոլած է ցարդ Ու-  
սանողութեան լիազոր մարմինը , եւ  
պիտի արտացոլէ դե՛ռ...

Որպէսզի Ե. րոպայի Հ. Ո. Միու-  
թիւնը իր գոյութեան իրաւունքը  
ունենայ , պէտք է որ անպատճառ ,  
ուսանողներու զանազան դասակար-  
գերու տարբեր ձգտումները , ընկերու-  
կան տարբեր պայմանները ու ատ-  
կից ծնած ըմբռումները չեզոքացնող  
ու ընդհանուր միասին ձուլող գոր-  
ծունէութեան եղանակ մը իրեն նը-  
պատակ գծել :

Այդ ընդհանուրին ալ յարմար ու  
սեփական եղող ուղղութիւնը զուտ

ուսանողական գործունէութիւն մը  
կրնայ ըլլալ , քանի որ ինչ կուսակ-  
ցութեան ալ պատկանին՝ բոլորը հայ  
ուսանողներ են :

Ուսանողական գործունէութիւնը  
սկսելով կը հասկնամ . ուսանողական  
չփուժ բոլոր արտասահմանեան հայ  
համալսարանականներու մէջ , ու այդ  
բանէն ծագելիք արդիւնքը փոխա-  
դարձ ու անմիջական ծանօթութիւն-  
ներու ապագային տալիք օգտակա-  
րութեան մը մէջ փնտռելու է : Այս  
թէզը չեմ ուզեր աւելի լուսարանել՝  
այն միակ պատճառով որ առ այժմ  
այդ մտքին կարագետ ըլլալու հա-  
մար ոչ մտադրութիւն եւ ոչ ալ ժա-  
մանակ ունիմ : Ու այդ թէզը շատ  
լաւ ծանօթ է , եթէ գիտակցութիւնը  
չի պակսիր . Ե. Հ. Ո. Միութեան ղե-  
կավարներուն . որոնք լաւագոյն պայ-  
մաններու մէջ կը գտնուին՝ այս թե-  
ւագրութեան տակ՝ սթափելու ու ճշ-  
մարիտ ուղին գտնելու համար :

Այդպէս , յեղափոխական կամ ու-  
րիչ ընկերական գործունէութեան մը  
ստեղծելուին գալով խնդիրը դարձ-  
եալ շատ պարզ ու դիւրաւ իրակա-  
նալի կը ներկայանայ , քանի որ ան-  
պատճառ կը բաղձան ուսանողութեան  
այդ անկաններով պատկուած գոր-  
ծունէութեամբ մը ոգեւորուի :

Օրինակի համար ամէն կողմ գաշ-  
նակցական ուսանողներ կան : Իւրա-  
քանչիւր քաղաքի մէջ կրնան անոնք  
դաշնակցական ուսանողական խում-  
բեր կազմել ու փոխադարձ ներկայա-  
ցուցիչներով համագումարներ կազմել  
իրենց իրենց մէջ : Այդ պահուն շատ  
աւելի օգտակար կըլլան ուսանողները  
որոնք մնալով գաղտնապահ շրջանա-  
կի մը՝ անյայտ կը մնան սուլթանէն  
ու Զարէն , ու իրենց անունները Բ-  
Իրան չեն հաղորդուիր : Պատրիարքն  
ալ կտապալի , հետեւաբար «Թագրի-  
ներ» ստանալու անխոթութեանէն :  
Ես վստահ եմ , այդ պահուն , ուսա-  
հայ ուսանողները իրենք պիտի ա-  
ռաջարկեն համակրական հեռագիր  
գարնելու ուսու կուսող ուսանողներուն :  
Ուսանողին իրական դերը իր հայ-  
րենիքին ծոցը վերադառնալուն մէջ  
է . ու այդ ալ՝ անոր վերադարձը վը-

տանգի դնելով չէ որ կիրականանայ...

Գալով «Ինչ ուրեքս սոցիալիստ» ու-  
սանողներուն մանիֆէստին , զոր  
«Եւրոպայ» հրատարակեց , այդ խեղ-  
ճերը չեմ գիտեր իբր ի՞նչ «Հայ ու»  
իրաւունքներ կը պղպղատն ձեռք  
բերել :

Այդ ուսանողները տիպարներ են ,  
որոնց համար հայութիւն ու ազգու-  
թիւն գոյութիւն չունի . եթէ հայ են  
ի՞նչու ուրեմն ազգային գործունէու-  
թեան կը խրոչին . իսկ եթէ հայ չեն  
ու միջազգային մարդիկ . ի՞նչու ու-  
րեմն կը բաղձան զրկել Եւրոպայի  
ուսանողական միութիւնը իր ընդ-  
հանուր հայ անունէն :

Ինչպէս կերելի իրենց այդ ամառ-  
ֆէստով ուզած են անգամ մը եւս  
իրենց համագումարներու ջրախորթիւնը  
ցոյց տալու :

«Աւելի մարքսիստ են քան Մարք-  
սը» , որովհետեւ չեն հասկցած Մարք-  
սը , ինչպէս չեն հասկցած իրենց հայ  
ըլլալը կամ ո՛չ :

Եստեղծ հանդիպած եմ այդ ազե-  
մօկրատներէն , ու եթէ ըսեմ որ ա-  
ռանց ծայրայեղական մը ըլլալու՝ թ-  
րեցմէ շատ աւելի մտածումներու  
ու գործերու մէջ ազատամիտ դուրս  
եկած եմ , չեմ չափազանցեր : Ըսե՛մ  
որ այդ երիտասարդ հայ դէմօկ-  
րատներուն շատ-շատերը հետեւողա-  
բար կամ նմանաբար այդ անունով  
ինքզինքնին մկրտած են , առանց  
այդ «Տօկթիւնէն» բառ մը իսկ մար-  
տա ըլլալու :

Եթէ՛մ որ հինգ օր առաջ մոլեռանդ  
ազգասէր եղող ուսանողներ հինգ օր  
վերջ ազեմօկրատ դարձած էին . ուս  
աղջիկներու հետ ամուսնութեամբ...

Երջանի՛կ ազգ ենք . Ամէն գոյնէ  
մարդիկ ունինք :

Գ Գ .

Փարիզ

ԱՐԱՐՆԵՐՈՒ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ  
Տնակցութիւն մը նե՛միպ Ազգերի  
պիտի հետ

Բաւական ժամանակ է վեր եւրո-  
պական թերթերը կը հաղորդէին ա-  
րաբներու վերջին ապստամբութեան

Ա. ԱՄՖԻՏԵԱՏՐՈՎ

ՎԻՍՏՐՈՒԱ ՊԻՎԼՈՎ : Ա

(Տօնախմբութիւն)

—o—  
(Գրագիտի յիշողութիւններ  
ոյց : Ամրան արկածներ  
բաւական սարսիկակ հա  
սարակութեան մեք)

—o—  
(Թարգմ. ուսանողներ)

է .  
(Շար. նախորդ թիւին)

Ուր որ գնում էի , անպատճառ Ա.  
Ֆանասիչին հանդիպում էի , շարու-  
նակեց Վիկտորիան , միշտ իր ստոր  
զգայուն տարփոտ նայածքով . մա  
նաւանդ երբ առանձին էի հանդի-  
պում : Ուղիվ փնտաող սիրահարի նը-  
ման . հետեւում եւ ինչ որ սպա-  
քում է...

—Հա , հա , վիկտորիա , գոռում  
էր , Օրեստ Պօլուրեաբովը , որը հի-  
մա կաթածահար եղած գեղանոցում  
է գտնվում , ընդ տուրպակի մէջ պա-  
նել չէ կարելի . պարզ է որ Ա.Ֆանա-  
սիչը քեզ վրա սիրահարված է :

Ամենքն էլ ծիծաղում են , եւ էլ  
եմ ծիծաղում , ներքին սարսուռս  
խեղդելով ծաղրում եմ :

—Սեղճ Ա.Ֆանասիչ , ճիշտ է՞ ,  
ինձ վրա սիրահարված է՞ :

—Հը հը հը , սիրահարված եմ , ով  
կարող է չը սիրահարվել ձեր վրա ,  
պատասխանում է Ա.Ֆանասիչը . հը ,  
հը , հը , թոյլ տէ՛ք ձեռքդ համ-  
բուրեմ :

—Եւ յոյս ունե՛ս , կատակելով  
հարցնում են երիտասարդները . Ե  
թովպացի յոյս ունես եւ փոխադարձ  
սիրոյ ծարաւի՞ ես :

—Հը , հը , հը , շարունակում է Ա.  
Ֆանասիչը , յոյսը երկնքի անուշ  
դեսպանն է . այդպէս է սովում մի  
երգում :

—Այ դու սատանա այ դու սֆաթ ,  
այ դու անսանձ ստախոս ,  
ես էլ կտորտվում եմ :

—Յոյս մի ունեցէ՛ք Ա.Ֆանասիչ ,  
ամենքին էլ յայտնի է որ ես խստա-  
սիրտ եմ :

—Հը , հը , հը , շարունակում է Ա.  
Ֆանասիչը . ես կըստասեմ , որովհե-  
տեւ պատահում է որ քարասիրտներն  
էլ բարի են դառնում եւ անգրգե-  
լիները խոնարհում են : Հը , հը , հը ,  
ահա եւ ես կստասեմ :

—Է՛հ սպասեցէ՛ք . բայց շատ պէտք  
է սպասէ՛ք :

—Հը , հը , հը , ոչինչ , շտապելու  
տեղ չունեմ , ես կըստասեմ : Այ մեր  
երիտասարդները չեն կարող սպասել  
որովհետեւ ապրել շատ են ուզում եւ  
շտապում են . իսկ ես արդէն ապրել  
եմ . այդ պատճառով էլ կըստասեմ :

—Որչափ համբերող նկարագիր ու-  
նե՛ք :

Հը , հը , հը , թոյլ տէ՛ք ձեռքդ  
համբուրել :

—Հեռացի՛ր աղջկանից , ընդմի-  
ջում է Օրեստը : Այդ ի՞նչ է , շա-  
րունակ ձեռքդ , ձեռքդ համբուրեմ .  
այ դու Սատիր :

—Հը , հը , հը , պատասխանում է  
Ա.Ֆանասիչը , ասում են որ Սա-

—Յոյս մի ունեցէ՛ք Ա.Ֆանասիչ ,  
ամենքին էլ յայտնի է որ ես խստա-  
սիրտ եմ :

—Հը , հը , հը , շարունակում է Ա.  
Ֆանասիչը . ես կըստասեմ , որովհե-  
տեւ պատահում է որ քարասիրտներն  
էլ բարի են դառնում եւ անգրգե-  
լիները խոնարհում են : Հը , հը , հը ,  
ահա եւ ես կստասեմ :

—Է՛հ սպասեցէ՛ք . բայց շատ պէտք  
է սպասէ՛ք :

—Հը , հը , հը , ոչինչ , շտապելու  
տեղ չունեմ , ես կըստասեմ : Այ մեր  
երիտասարդները չեն կարող սպասել  
որովհետեւ ապրել շատ են ուզում եւ  
շտապում են . իսկ ես արդէն ապրել  
եմ . այդ պատճառով էլ կըստասեմ :

—Որչափ համբերող նկարագիր ու-  
նե՛ք :

Հը , հը , հը , թոյլ տէ՛ք ձեռքդ  
համբուրել :

—Հեռացի՛ր աղջկանից , ընդմի-  
ջում է Օրեստը : Այդ ի՞նչ է , շա-  
րունակ ձեռքդ , ձեռքդ համբուրեմ .  
այ դու Սատիր :

—Հը , հը , հը , պատասխանում է  
Ա.Ֆանասիչը , ասում են որ Սա-

տիրները յաւերժահարսերի ետեւից  
էին ընկնում , եւ երբեմն էլ յաջո-  
ղում էին :

—Գեղ , իվանոս , այդ համեմա-  
տութիւնների համար , պէտք էր շար  
դել . ծուլօրէն նկատում է Ծեւեայ  
Նօրովիչը եւ շարժվում , աթոռը ա-  
կին սկսում է ճռուլ , այնքան սար-  
սափելի օւժեղ էր :

—Թողէ՛ք . միջամեցի ես , թող  
զուր տայ զլիւիցը , ինչ ուզած է՝  
այդպէս աւելի զարնայի է :

—Հը , հը , հը , զարնալի է .  
հենց այդպէս , տէ՛ք ձեռքդ համբու-  
րեմ կրկնում է Ա.Ֆանասիչը :

—Այո , ես զինուորի կնիկ Մալա-  
նիային կը յայտնեմ , այ դու ծերուկ  
կնամու , ծաղրում է Օրեստը . կը  
յայտնեմ թէ , դու այստեղ ինչ ես  
անում եւ նա վշակութիւց կը հասցը  
նէ :

—Իզուր էք նեղանում , վիկտո-  
րիա Պավլովնա , մի հաւատացէ՛ք նը-  
րան . թոյլ տէ՛ք ձեռքդ համբուրեմ :

Ամառը անցնում էր . չէի իմա-  
նում դէպի իշխանը ունեցած «էրս  
անցնում էր թէ ոչ , բայց զգում էր

առթիւ սարած շարք մը յանդուգն արարքները, որոնք մեծապէս անա-

կրնակալ մը եղան՝ մանաւանդ այն- պիսի պահու մը, երբ բոլորին աշ- քերը ուղղուած են հեռաւոր Արեւել- քի վրայ:

Ինչո՞ւ այդ արարքները, ըլլալով հանգիստ այնքան խաւարամիտ ու ազէտ, յաջողեցան այսպիսի կարճ ատենուան մը միջոցին խաղալ կարգ մը այնպիսի անհաճոյ խաղեր Սուլ- թանի գլխուն, որոնք այդ արիւն- ծուծ վամպիրն անգամ չուարեցուցին:

Մինչ մենք, մեր բոլոր «զարգացու- մով» եւ սլուսուորութիւնով, ոչ մի- այն զգալի վնաս մը չը կրցինք հաս- ցնել Երևանի մարդակուռ հիտրային այլ եւ տուժեցինք, կը տուժենք և ... Թերեւս տուժենք տակաւին ... Ինչո՞ւ:

— Այդ հարցին պատասխանը, մա- նաւանդ մեզ համար, զարհուրելի է: Պատճառները մէկով երկուքով չէ որ կը հաշուեն, բազմաթիւ ու բազմա- զան են, որոնց մասին հոս չենք ու- զեր երկարօրէն խօսիլ, նեւ ու ըլլա- լով այդ մեր նիւթէն: Թողով ատոր մանրամասն քննութիւնը—մեր ակնո- ցով—մտաւոր ապագայի մը, սոյն յօդուածով կը փափաքինք ներկայա- ցնել մեր ընթերցողաց արար ապրու- տամբներու կեանքէն շտաբ մը զԵՐ- ուսաններ:

Անցեալները, իր մէկ հոյակապ զօրծով ֆրանսական մամուլին մէջ գրեթէ հանրածանօթ դարձաւ Նէճիպ Աղուրի պէշը, նախկին օգնական Ե- րուսակէժի կառավարչին եւ այժմ ալ Արարներու Անկախութեան կուսակ- ցութեան» հիմնարկիչ-ղեկավար պե- տը:

Հատորը որ լոյս ընծայուեցաւ Բա- րիզ, տիտղոսուած էր Արար ազգու- թեան զարթնումը Ասիական Թուր- քոյ մէջն կը պարունակէր իր մէջ այնպիսի շահեկան տեղեկութիւններ որոնք մինչեւ այսօր բոլորովին ան- ծանօթ մնացած էին զուրպիներուն:

Բայց եւ այնպէս, այդ հատորով չէ որ պիտի զբաղուինք մենք: Այս օրերս, ֆրանսական օրաթերթի մը ներկայացուցիչներէն մէկը, տեսակ- ցութիւն մը ունենալով Նէճիպ պէշի հետ, իր այդ խօսակցութեան ար- զիւնքը խտացուցած էր թերթին մէջ

որ իրրեւ հետաքրքիր հատուած մը, քաղուածօրէն կը ներկայացնենք զայն մեր ընթերցողներուն:

Ահա իր խօսքերը:

«Արարներու հատուածակաւ շար- ժուած շատ հին է. ժամանակը հա- տունցուց զայն:

«Թուրքերու մեզ հանդէպ ունե- ցած ատելութիւնն ու արհամարհան- քը, իրենց յամառութիւնը մեզ հե- ոացնել բարձր պաշտօններէ, մեզ բաժանելու, մեզ անգթօրէն շահա- գործելու եւ մեր զժբաղք երկրում յառաջդիմութիւնը անդամալուծելու համար» աղէտը փութացուցին:

«Արար բոլոր երկիրներու մէջ Տիւր- քիսէն մինչեւ Սուէզի ջրանցքը, եւ Միջերկրականէն սինչեւ Օմանի ծովը չկայ մէկ հատիկ անձ մը, որ գտնո՞ չըլլայ թրքական ընթերցիչ եւ փոփո- խութեան մը չբաղձայ:

«Նոյն իրենք թուրքերը, որոնց մէջ եւ Երևանի պաշտօնեաներն ու Սուլթանի սիրելիները, կատեն տի- րող սրտեմբ, որ ոչ իրենց պաշտօն- ները կապանովցնէ եւ ոչ ալ ... Ի- րենց գլուխները, Այսպէս, թուրք կառավարութիւնը հատ մըն ալ ան- կեղծ պաշտպան չունի: Թէպէտեւ թուրք ընթերցիչ ինքնաձիւնը, բայց և այնպէս արարները մինչեւ օրս իր գլխաւոր ուժը կազմած են, որով- հետեւ ընթերցումի ձայնին ականջ չէին դնէր:

Ճամբորդած եմ ամբողջ Սիրիան և Պտղոստիւնը, հարցուփորձած եմ բո- լորը, — ցիգան պէտուիները, գեղ չուկները, քաղցրիները, արհեստա- ւորները, զինուորները, ոստիկան պաշտօնեաները, ժանտարմները, եւ իւրաքանչիւրը կրկնած է յաւիտենա- կան գանգատը, Ահա ասով էր որ զգուած շուրջ կատարուող ստորնու- թիւններէն՝ զորս անկարող էի ար- գելել, եւ վստահ չըլլալով կեանքիս, չը նայելով պաշտօնակիցներուն, ո- րոնցից թողուլ երուսակէժի կառա- վարչի օգնականի պաշտօնն եւ տալ արարներուն վարիչ կուսակցութիւն մը եւ փրկել զանոնք թուրքական լուծէն: Ահա մեր ջանքերը յաջո- ղութիւնով պսակուեցան. ճիշդ տա- յի մըն է որ գոյութիւն ունինք եւ յաջողած ենք ազատել Նէճիպը, Բա- րիզը:

«Մեր ընդհանուր ապստամբութեան զէպէն հետեւեցնելով, թուրքիս ան- կարող պիտի ըլլայ երկար գոյու- թիւն ունենալ. այլ եւս կոյան պի- տի չունենալ. պիտի չը կրնայ մա- կեղոնացիները, ճնշել, ո՞չ ալ պահել պուլկարները, ինչպէս եւ ալպանա- ցիները ու հայերը:

«Ուստի Եւրոպա պիտի ստիպուի միջամտել եւ խաղաղ լուծում մը յա- տալ բերել, ճանշնալով ինքնուրոյն անկախութիւնը այն բոլոր ազգու- թիւններուն, որոնք այսօր անկա- յուն հաւաքում մը կազմեն Օթոման կայսրութիւն անունին տակ:

«Ուստի շամիւ կը ջանայ հա- մոզել Եւրոպան ի՞նչ պատրաստ է նոր գունդեր զրկել Նէճիպը վերստին յաղ- արք միջոցին շատուած էր համար- վում, իսկ ծեղանալուց յետոյ շնոր- հակալութիւն որ Սատիր եղայ. եւ իմ կարծիքով աւելի լաւ է այդպէս:

— Ինչո՞ւ համար: — Վարենում եմ բարկանաք, չեմ ասի: — Ուրեմն աղտոտ բանք պէտք է ասէք, դուրս աւէք, միեւնոյն է, ձեզնից լաւ բան չէ կարելի սպասել: — Հի, հի, հի, սատիրները իրենց նկարագրի զիմացկանութեամբ էին գերազանցում աստուածներին, յաւեր- ժահարսերի առջեւ աստուածները սէր էին ցոյց տալիս եւ սրնգի վրա ա- ծում. էն յաւերժահարսը լսում, լը- սում ու զգայնանում է. բայց աստ- ւածիկները երիտասարդ եւ յիմար լինելով այդ չեն նկատում, միայն սրինգն են փչում հա փչում. Այնպէս որ յաւերժահարսը սկսում է ձանձ- րանալ եւ ինքզինքը մի տեսակ զգալի եւ ահա այդ տեղ է որ սատիրը մի- մար չէ լինում. հենց որ յաւերժա- հարսը ինքնամոռացութեան մէջ է ընկնում... Սատիրը իսկոյն վրա է հասնում... իսկ աստուածիկը սրինգն

ըր եւ Նէճիպը. Աւելի քան երեսուն տարի է ի վեր սոյն նախնիները կը կոռէին Թուրքոյ գէմ առանց հե- տեւանքի որովհետեւ այս վերջին- ներս Սիրիայէն և Մեսոթամիայէն հոն գունդեր զրկելու միջոցներ ու- նէին: Բաւական եղաւ մեզ իրատեղ մեր հայրենակիցները՝ չը կոտորելու իրենց եղբայրները յօգուտ օտարա- կան եւ հարստահարիչ թուրքին եւ անոնք՝ նետելով զինքներին՝ ապրու- տամբներուն միացան:

Ահա թէ ինչպէս Մահմուտ Եահիա այսօր Սանաա է եւ Իպս-էզ-Սէուա Պաղատաի քովերը: Թուրք նախկին գլխաւոր հրամանատարը, Ռիգա փա- շա մեր բանտարկեալն է: Մանաշայի մէջ, Սանաայի կէս ճամբան, գուն- դերու քսան դիակները միայն մնա- ցած են Իգլէթ փաշային, Բալոր Ա- բարիայէն, Սուլթան պահած է մի- այն Պաղատա, Մօսուլ, Հալէպ Պէյ- րուի, Տամասիս եւ Երուսաղէմ, ուր ունինք էն հզօր կուսակցութիւն- ները եւ պատրաստ ամբողջ երկիրը ոտքի հանելու մէկ թիթեւ նշանի մը վրայ: Աւելին, այն պաշտօնեաները որ կը կառավարեն սոյն նահանգները Սուլթանի անունով, շատ քիչուոր են — մեծ քաղաքներում 20—30 եւ 2—3 երկրորդական նահանգներու մէջ: Հապա, մեծամասնաբար չէրքէզներ, թաթարներ, քիւրտեր, վրացիներ և պօսնիացիներ են առանց հայրենիքի, եւ որոնք ալ մեզ չափ երկրիւր ունին թուրքերէն:

«Մեր ընդհանուր ապստամբութեան զէպէն հետեւեցնելով, թուրքիս ան- կարող պիտի ըլլայ երկար գոյու- թիւն ունենալ. այլ եւս կոյան պի- տի չունենալ. պիտի չը կրնայ մա- կեղոնացիները, ճնշել, ո՞չ ալ պահել պուլկարները, ինչպէս եւ ալպանա- ցիները ու հայերը:

«Ուստի Եւրոպա պիտի ստիպուի միջամտել եւ խաղաղ լուծում մը յա- տալ բերել, ճանշնալով ինքնուրոյն անկախութիւնը այն բոլոր ազգու- թիւններուն, որոնք այսօր անկա- յուն հաւաքում մը կազմեն Օթոման կայսրութիւն անունին տակ:

«Ուստի շամիւ կը ջանայ հա- մոզել Եւրոպան ի՞նչ պատրաստ է նոր գունդեր զրկել Նէճիպը վերստին յաղ-

թահարելու համար. սակայն ասի անհնարին հարց մըն է, նախ, Սի- րիոյ եւ Մեսոթամիոյ գինուորները չպիտի յառաջ խաղան, կամ հասնե- լով հոն՝ ամբոխային սպեւտամբու- թիւն ընեն: Ապա, Էթէ Սուլթան, փափաքելով ամեն գնով պահպանել Եւրոպայի առաջ իր զինուորական րրէսթիժը, յամասի Անատոլի թուրք զինուորները զրկել, անպատեղի դժուարութեաց պիտի բաղխուի: Թուրք զինուորները չեն կրնար դի- մանալ Նէճիպի այրող կրիային. ա- ռանց վճարման ստանց սնունդի եւ յարմար զգեստեղինաց: Եւ յետոյ սուլթան չպիտի կրնայ բնաջնջել Հա- յատանն ու ոտս սահմանագրութիւն մէկ կողմէն ու Մակեդոնիան՝ միւս կողմէն թրքօ Պուլկարական դաշնա- դրութիւն մը կը յայտարարեն... Դա սխալ լուր մըն է: Սուլթան ըզ- գուշանալու համար պուլկարներէն եւ իրրեւ խնայութիւն աւելի պիտի նախընտրէ զհոն Նէճիպը, քան Մա- կեդոնիան ու Պոլսի բիսկ ընել: Ա- լելին, Երևանը անգիտակից չէ որ Պուլկարիս, Սերպիս եւ Մանթիշէ- կրօ համաձայնութեան մէջ են Մա- կեդոնիա միացեալ ու վճռական գոր- գունէութիւն մը առաջ բերելու հա- մար: Վերջապէս, եթէ Սուլթան կու- պէ կերպով մը վերստին տիրանալ Նէ- մէնի, հարկ է սպասել մինչեւ յա- ջորդ ձմեռ, զրկել հոն առ իտպէս հարիւր հազար մարդ, լաւ գինուած եւ նա մանաւանդ՝ հաւատարմ ու ծախսել հարիւր հազարներով ֆրանք: Բայց Ծրանքօ Գերմանական փոխա- տուութիւնը, — ներքե՛ք արատ- յայտութեան, — արդէն կուլ տրո- սած է, տրուելէ առաջ:

«Ուրեմն Նէճիպ իր անկախութիւնը պիտի պահէ: Մահմուտ Եահիա պէտք է երկարէ իր յաղմութիւնները մին- չեւ Հէճազ, գրաւէ սուրբ քաղաքները եւ տիեզերական իսլամութեան խա- լիֆը հռչակուի: Ան պէտք եղածին աւելի ընդունակ է կրօնկան սոյն գերագոյն իշխանութեան, քանի որ չէր ի փ է այսինքն մարգարէին յաջորդը...»

Այսչափով կը բաւականանա՞ք Նէ- ճիպ պէշի յայտարարութիւնը յառաջ բերելով: Մնացեալը գերմանական և

լ ամուս...

— Թու, ստորութիւն... — Ըր, հը, հը, ինքներդ հրամա- յեցիք խօսել:


— Իսկ դու դուրս տուր, բայց չափը մի անցրու. գոտում է Օրիստր, բռունցքը սեղանին զարկելով:

Հիմա գուք հասկանում էք թէ Բուրուը որտեղից է վերցրել այդ յաւերժահարս Սատիրի հետ, բացատր վիլ են, խեղճերը. այնքան կատարել է որ բոլորը դուրս է թա- փել, պահեստի համար բան չէ թո- ղել: Չը գիտէ թէ ինչպէս անի որ ամենամանր կերպով վիրաւորէ:

— Բուրուը ինձ յայտնեց որ դուք էք նրան տուն աւել այդ նիւթի մասին:

Վիկտորիան մի փիչ մտածեց եւ զրական մտքով զուրք շարժեց:

(Շարունակելի)



Ֆրանսական երկաթուղիներու գծի մասին է ցոյց տալով Նախորդին առաւելութիւնը, զգուշացնելով Պրանսան՝ գործի սկսիլ Փոքր Ասիան գերմանական քոյունի մը ըլլալէ տուալ:

Հակառակ նէճիպ պէշի կորովի, համարձակ եւ վստահ յայտարարութիւններուն, սակայն, Պրանսացի հտրցատուն քիչ մը չափազանց լուստես կը գտնէ զանոնք եւ թէեւ տարակուսանք մը ունի արարներու ինքնագլուխ անկախութիւն ձեռք ձգելու նկատմամբ: — Բնականաբար կը սկիզբ կը դնէ, քաղաքակրթութիւնը որ մը վերստին պիտի մուտք գործէ Սիւրիա, Մեսորթամիա եւ Արարիոյ բոլոր բնակելի տնկիւնները: Բայց ստի լոկ երկաթուղիներու միջոցով եւ եւրոպական ազդեցութիւնով պիտի ըլլայ առանց քաղաքական խառնակութեան, թէ արարական այն համերաշխութեան շնորհիւ, որ տակաւին նախընտրուած կերպով... Դէպքերը թերեւս մտտիկ, այդ պիտի յայտնեն մեզ...

Ամենէն խոհեմ ու խելացի ընթացքն է այդ: Այս պահուս, ժամանակները այնքան յոյի են, որ անհնար դարձած է որոշ նախատեսութիւն մը ընել նոյն էն մերձաւոր վազուան վրայ, առանց ատոր տրամագծորէն հակառակին հանդիպելու տրուր հարկին մէջ դառնելու:

Արեւն, թող գէպքերը ինքնին խօսին իրենց համար:

Մ. ՏՈՒԱԿ

ՍԳՄԱՆՆԵՍԻ ՍԸ ԱՌԹԻԻ

Խաղաղութեան մեծ առաքեալ կոչուած ցարին հրամանով հազարաւոր անմեղ հայերու արիւնը դեռ ցամքած չէր. երբ Սիւրիայի ժողովուրդը, այն ամբողջ հայութիւնը բնի կուզենք, կատարելու չը թերացաւ իր սգահանդէսը՝ բուռն ու միանգամայն արդարացի բողոքի մը տակ:

Ս. Չատիկ երկրորդ օրն էր: Հայ եկեղեցին, իր հնաւանդ սովորութեան համաձայն, մեռելոց հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարէր: Այդ բարեպատեհ առիթը տեղւոյս ուէր վաղիւնակ հօրը համար մեծ կարեւորութիւն մը ունէր: Ս. Յարութեան հետ, անխորին յուզմունքով մը լեցուած՝ աւետեց թէ Պաքուի կոտորածին հայ նահատակներու, և Սօֆիայի երկու անմահ հերոսներու համար հոգեհանգիստ մը տեղի պիտի ունենար այդ օրը:

Արգարեւ ամեն անոնք, որ հայ արիւնը կը զգային իրենց երակներուն մէջ ու սիրտերին քարացած չէր, փութացեր էին ներկայ գտնուիլ այդ հոգեհոյզ արարողութեան: Ս. Պատարագէն ետքը ձեր վաղիւնակ հայրը, շըրջապատուած Հոգաբարձութեան և Թաղ, Խորհրդոյ անդամներէ, Լուսաւորչեան երկսեռ վարժարանի սաներէ և արասուալից աչքերով խռոն բազմութեանէ մը, եկեղեցին թաղուած բարի մեռելներու գերեզմանին վրայ կատա-

րեց կրօնական այն յուզիչ տեսարաններէն մին, որ անկարագրելի է:

Յետոյ վարժարանին տնօրէն՝ Լ. Շիտանեան գրաւոր ճառ մը արտասանեց ներկաներուն առջեւ: Յարգելի տնօրէնին նպատակը սա էր: «Ինչպէս հայերը տարինք, որ անտի միտքէ անցուցած չէին թէ քրիստոնէայ մը Սուրբութեան աւելի վատթար ու աւելի բարձրագոյն կրնայ ըլլալ... այդ պատճառաւ ինքնապաշտպանութեան գաղափարը գոյացած չէր իրենց մէջ... սակայն այսօր այդ գաղափարին ստիպուած են փարիլ ու սուրբի մը պէս կը պաշտեն զայն... որովհետեւ վերջնական միակ միջոցն է անոնք»:

Տ. ճառախօսը յուզիչ նկարագրութիւնով մը գրուածեց Բիէն Գիլյոսի անձնաւորութիւնն ու ըստ. «Անիկա, այդ մեծ մարդասէրը, հայուն եղբայրն է: Անոր խօսքերուն ու գրութեանց մէջ դժբաղդ ու արիւն արցունք թափուող ժողովուրդներու հառաջանքը լեցուած եր: Ան՝ մեղի չափ մեր վիշաք զգացած է: Ան մենէ աւելի մեր տառապանքներուն համար բողոքած է: Ան որ մեծ ոճրագործ անունը տուաւ, ինչպէս Լորտ Կլատաստն Մեծ Խարդասպան անունը առած էր Սուրբանին...»

Այսպէս Տ. տնօրէնը վերջացուց իր խօսքերը Սօֆիայի մէջ գաղափարի ու հայրենեաց մեծ գործին համար զոհ եղող Գիլյոսի տափօրին ու լգուարդին վրայ ակնարկ մը ձգելով:

Հոգեհանգիստը կամ աւելի ճիշդն ըսելով սգահանդէսը մեծ տպաւորութիւն թողուց ներկաներուն վրայ: Չը մոռնանք յիշատակելու թէ վաղիւնակ հայրն այնքան յուզուած էր որ չը կրցաւ երկու խօսք ալ իր կողմէն աւելցնել: Հոգիին անհուն հեկեկանքը խղզած էր իր ձայնը:

Մեռելոցի օրը, սգահանդէսէն ետքը, հինգ աղիկներ, (վարժարանի սանուհի) ինքնաբերաբար գաղափար մը կը յղանան զոր կարծէ յիշատակել: Այդ ծաղկատի աշակերտուհիներն անձնուիրաբար յանձն կառնեն տունէ առն, փողոցէ փողոց ման գալ ու հանգանակութիւն մը կատարել, որուն արդիւնքը յատկացուէր Մուշի եւ Սասունի կարօտելոց: Երեւակայեցէք, 40—50 տունէ բաղկացած հայութիւն մը կայ հոս, այդ աղիկները մէկ օրուան մէջ 50 ֆրանք գրամ կը հաւաքեն...»

Մեծ յաղթանակ մը չէ՞ Սիւրիայի նորազարդ իգական սեռին: Այդ գրամը զրկուած է Բիէն Գիլյոսին եւ արդէն հրատարակ-

ուած է «Իրօ Արմէնիա»ի մէջ:

Հապա՞ Սիւրիայի հայ տիկիւնները...

Օ՛, անոնք ալ արժանի են թէ յիշատակութեան և թէ անկեղծ յարգանքներու:

Մեծ պահոց առթիւ, եկեղեցիին զոցուած վարագոյրը բանալու համար մասնակցօրէն 100 ֆր. գրամ տուին ու կլորիկ հասոյթ մը գոյացուցին ատանկով:

Իսկ այրերը այդ պարտքը կատարեցին 70—80 լէվի չափ գումար մը նուիրելով իր իր զագին:

Նախորդ յոշուածով մը քիչ շատ գաղափար տուած էր հոս տեղի ունեցած հանդէսի մը վրայ: Անկէց ետքը նորութիւն մը եթէ կայ, այն ալ պատահաբար ձեռնութեան ընտրութիւնն է: Կը յուսանք թէ այս նորընտիր անդամներն ներկայ շրջանին մէջ ալ պիտի օգտուին երիտասարդ ուսուցիչին աշխատութիւններէն ու վարժարանին համար ամեն ջանք չեն խնայեր: Նորընտիր հոգաբարձութեան մէջ կարեւոր անձնաւորութիւններն են Տիարք Խ. Թօաֆճեան և Ա. Գիլիբեան: Միեւնոյն ատեն այդ անդամներու թիւին վրայ աւելցած են Տիարք Յովհաննէս Փիլիպոսեան և Վարդան Արապեան, որ ուսումնասէր երիտասարդ մըն է:

Այս անձերը եթէ ձեռք ձեռքի տան պատիւալ խորհրդոյ, պիտի յաջողին այս շրջանին մէջ մեծ բաներ ընել: Արդէն ունին ուսումնաստանչ ու վարժարանին հոգի տուող քահանայ մը՝ յանձին տէր Վաղիւնակ հօրն, ալ ի՞նչ կը պակսի իրենց:

Առ այժմ այսչափ: Միհրան Ա. Խաչատրեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Մայիս 11ին Բագուի մէջ նահանգապետ իշխան Նախաշիտաճէ իր տան քով կառք նստած պահուն ուսման սպանուերէց Ռուսը շարք ու փշուր ըրեր է կառքը, իր քով նստած քաղակ սպան և ծանրապէս վիրաւոր էր կառապանը: Նախաշիտաճէին ժարմինը կտոր կտոր եղեր է:

Այդ գէպքէն Բագուի հայ ժողովուրդը սարսափած սկսեր է իրիֆիլի փախչիլ:

Նախիջեւանի եւ Երեւանի մէջ հայերու և թուրքերու միջև կրկին ընդհարումներ սկսեր են: Հայերը այդ կողմերէն թիֆլիզ կը վազեն:

Նախիջեւանի մէջ երեւցեր են 20 հոգիէն աւելի ուսման դիւնուած հայեր: Ժողովուրդը սարսափի մէջ ընկած է: Խանութները և ամբողջ շուկան գոցուեր են:

Թիֆլիսի և Կաթալիսի աղանակաւորութիւնը, հակառակ կառավարութեան արգելումին ժողովներ կազմեր են և որոշումներ տուեր են, որոցմով կովկասը կառավարելու համար ինքնորոշու և տեղական պահմաններուն գոհացում տուող վարչութիւն կը պահանջեն:

Ղրիմի թաթարներէն պատգամաւորներ գացեր են Յարին զանազան արտօնութիւններ խնդրելու թաթար բնակչութեան համար:

Բեթերսպուրկի մէջ, մեծ իշխաններէն յանձնախումբ մը կազմուած է հայրենիքը պաշտպանելու նպատակով: Կը կարծուի որ այդ յանձնախումբին նպատակն է թէ ներքին շարժումները խեղդել և թէ Յարին սանձել զիջումներ չընելու համար:

Ռուս պահպանողական տարրերէն ընկերութիւն մը կազմուած է հակառակ յեղափոխական ընկերութիւններու, որը շրջաբերականներով սպառնալիքներ կընէ ազատամիտ ուս տարրին հայերուն և հրէաներուն զանոնք երկրին թշնամի հռչակելով:

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

Թօքթոյէն մայիս 16ին պաշտօնապէս կը կը հեռագրեն:

Բօստէնսիլեանի Նաւատորմի զին մեծագոյն մասը ոչնչացած է 12 պատերազմական նաւեր կամ գերուած կամ խորտակուած են: — Բեթերսպուրկէն կը հաղորդեն որ ամիրալ Նէպոկաթով երկու հազար նաւատիրներով և եւրք զրահաւորներով միասին գերի ինկած են, իսկ «Պուվօրին» նաւը խորտակուած է, ատոր վերայ կը գտնուէր և Ռօստէնսիլեանի որ ծանրապէս վիրաւորուած է:

Այդ սարսափելի ճակատամարտէն անմիջապէս վերջը ճարտն ամիրալ Բամիմուրա իր նաւաբաժինով երեւցեր է Վլատիվոստոքի քովերը: հոտ եկող ռզս նաւերուն ճամբան կտրելու համար:

Ճարտնացիք միացած ուժերով և շատ կատաղի յարձակում գործեր են:

Յամաքային մեծ ճակատամարտն ալ կսպասուի շուտով:

Отговорникъ Мурадъ-Ераносянъ Печатница «Возможность» Варна